# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26/3/2

11 մարտի 2026 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 31 անդամներ:

Բացակա էին՝ Վարդան Ղուկասյանը, Սարիկ Մինասյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարին փոխարինող՝ Ավետիս Առաքելյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը**

*Նախքան օրակարգի հաստատումն ավագանու անդամ Կարեն Գրիգորյանը արտահայտեց իր անհանգստությունը՝ կապված Գյումրի քաղաքի փողոցների անբարեկարգ վիճակի հետ և հարց ուղղեց նիստը վարողին փոսային նորոգումների աշխատանքների ուշացման վերաբերյալ:*

*Նիստը վարողը պատասխանեց՝ ներկայացնելով ծրագրված աշխատանքների ծավալը և պարզաբանեց, որ աշխատանքների մեկնարկը կապված է եղանակային պայմանների հետ: Նշեց նաև, որ նախորդ տարիներին աշխատանքներն սկսվել են մայիսին, սակայն այս տարի՝ եղանակով պայմանավորված, անհրաժեշտ ջերմաստիճանն ապահովելու դեպքում նորոգման աշխատանքները կսկսվեն:*

ԼՍԵՑԻՆ

***1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 36-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 92-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ կետերի, 36-րդ հոդվածի դրույթներով **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն NN 1-5 հավելվածների:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Նախագծի վերաբերյալ ելույթ ունեցավ ավագանու անդամ Քնարիկ Հարությունյանը՝ անդրադառնալով մի շարք խնդիրների, այդ թվում թափառող շների հարցին: Հետաքրքրվեց բյուջեի ազատ միջոցների չփոխհատուցման պատճառներով և խնդրեց ներկայացնել մեկ տարվա ընթացքում իրականացված ծրագրերը:*
*Ավագանու անդամ Վահագն Մկրտչյանը հետաքրքրվեց, թե երբ պատրաստ կլինի շների կացարանի նախագիծը, որոնք են ուշացման պատճառները: Բարձրացրեց նաև աղբադաշտի վերաբերյալ «ԱրմԷկոՏեկ» ընկերության ներդրումային ծրագրի իրականացման խոչընդոտների վերաբերյալ հարցը:*
*Նիստը վարողը պատասխանեց հարցերին, ներկայացրեց իրականացված բազմաթիվ ծրագրերը, իսկ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ Կ.Մխիթարյանը հավաստիացրեց, որ հաջորդ նիստին կներկայացվի շների կացարանի նախագիծը:*
*Նիստը վարողը ներկայացրեց նաև վերը նշված ոլորտը կարգավորող օրենսդրական բացերը:*
*Ավագանու անդամների կողմից միաժամանակյա բազմաթիվ հարցեր տալու պատճառով առաջարկվեց հարցերն ուղղել միայն հերթագրման միջոցով:*

***Քվեարկության արդյունքները.***

| Կողմ -18 | Դեմ -0 | Ձեռնպահ -13 |
|---|---|---|
| Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ | | Վ. ՄԿՐՏՉՅԱՆ |
| Լ. ԱՆԱՆՅԱՆ | | Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ |
| Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ | | Լ. ԱՆԱՆՅԱՆ |
| Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | Շ. ԱՐԱՄՅԱՆ |
| Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ | | Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ս. ԷԼԲԱԿՅԱՆ | | Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ |
| Ս. ՄԵԼԻՔՅԱՆ | | Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ |
| Ս. ԱԴԱՄՅԱՆ | | Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ |
| Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | | Ա. ՀԱԿՈԲՅԱՆ |
| Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | | Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ |
| Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ | | Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ |
| Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ | | Վ. ԴԱՎԹՅԱՆ |
| Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ | | Լ. ՆԱԶԱՐՅԱՆ |
| Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ | | |
| Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |
| Ս. ՄՈՍՈՅԱՆ | | |
| Կ. ՍԻՄՈՆՅԱՆ | | |
| Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 37-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 7 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով և յոթ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) գրություններն՝ ուղղված համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝2025 թվականի նոյեմբերի 20-ին N 17972, 2026 թվականի փետրվարի 19-ին N2243, N2272, փետրվարի 24-ին N 2497, փետրվարի 25-ին N9597, N 2610 և փետրվարի 26-ին N 2684 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպություններին գույքի, համերգային գործիքավորման, համապետական միջոցառումների նկարահանումների, հոբելյանական համերգի նախապատրաստական աշխատանքների և համերգային նյութերի ձեռքբերման նպատակով, որպես ընթացիկ դրամաշնորհներ հատկացնել 8 524 000 (ութ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար) Հայաստանի Հանրապետությանդրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի 8/1/1 և 8/2/3 գործառական (4637) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*Հարցի զեկուցումից հետո նիստը վարողն առաջարկեց նախագծի հավելվածում նշված «Պարերի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության վերաբերյալ կարճ տեսանյութ դիտել:*

*Հարցերի համար ավագանու անդամները հերթագրվեցին:*

*Ավագանու անդամ Լևոն Անանյանը հետաքրքրվեց, թե միջազգային ինչ մրցույթների են մասնակցել դպրոցի սաները և ինչ ձեռքբերումներ են ունեցել, ինչպես նաև հաշվետու համերգից հետո ինչ ակնկալիքներ ունեն:*

*Նիստը վարողը ավագանու անդամների հարցերին պատասխանելու համար ամբիոնի մոտ հրավիրեց սպորտային պարերի դպրոցի տնօրեն Մ.Մամյանին:*

*Լևոն Անանյանն առաջարկեց կազմակերպել միջոցառումներ՝ դպրոցի սաների մասնակցությամբ՝ քաղաքում զբոսաշրջիկների հոսքը խթանելու համար և անպայման մեկ պարային զույգ ուղարկել սպորտային պարերի Եվրոպայի առաջնությանը՝ մասնակցություն ունենալու նպատակով:*

*Տիկին Մամյանը ներկայացրեց դպրոցի գործունեությունը և պատասխանեց հարցերին :*

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -31 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Կ. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 38-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3 (ԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հուսո Առագաստ-մսուր մանկապարտեզ»,«Ծիածան-մսուր մանկապարտեզ»,«Լիլիթ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2026 թվականի փետրվարի 25-ին 2642, փետրվարի 25-ին 2362, փետրվարի 25-ին 2495, թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպություններին տանիքի վերանորոգման համար որպես նվիրատվություն հատկացնել 1 025 000 (մեկ միլիոն քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-

գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4637) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին իրազեկելու հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 39-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 166-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի3-րդկետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով՝**Հայաստանի**

**Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N 283-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 166-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) որոշման 1-ին կետով հաստատված N 8 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի ապրիլի 1-ից:
***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -30 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 40-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**
***6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 164-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 10-ի N 8-Ա որոշումը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «« Մուշ» զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնելու մասին» N 164-Ա որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետում «23 982 072 (քսաներեք միլիոն ինը հարյուր ութսուներկու հազար յոթանասուներկու)» թիվը և բառերը փոխարինել «25 782 742 (քսանհինգ միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր քառասուներկու)» թվով և բառերով:

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026թվականի ապրիլի 1-ից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱՁԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳՁԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 41-Ա)*

ԼՍԵՑԻՆ

*7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 32 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 18-րդ հոդվածի 42-րդ կետով, Ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի քաղաքի թիվ 32 ընտրատարածքային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նախագահ՝ Ն.Մարգարյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի փետրվարի 19-ին N2287 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով բնականոն աշխատանքային գործունեությունն ապահովելու համար Գյումրի քաղաքի թիվ 32 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին որպես նվիրատվություն՝ գույք հանձնելու նպատակով թույլատրել ձեռք բերել գույք 600 000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժողությամբ:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (4237) «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -29 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ճ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 42-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***8. «ՄԻ ՍԱՐ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Մի սար» կրթամշակութային, բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Արևիկ Թանաշեանի՝ գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի հունվարի 07-ին և 19-ին NN34,631 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. «Մի սար» կրթամշակութային, բարեգործական հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 356 000 (երեք հարյուր հիսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ հարվածային գործիքներ ձեռք բերելու համար:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևիկ Թանաշեանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*Ավագանու անդամների հարցերին պատասխանեց «Մի սար» կրթամշակութային, բարեգործական հասարակական կազմակերպության ներկայացուցիչը:*

*Ռուբեն Մխիթարյանի առաջարկով և ավագանու մյուս խմբակցությունների համաձայնությամբ հարցը հեղինակի կողմից հանվեց օրակարգից: Սակայն Ռ.Մխիթարյանը խոստացավ կազմակերպության համար գտնել ֆինանսավորում՝ նախագծում նշված հարվածային գործիքը գնելու նպատակով:*

**ԼՍԵՑԻՆ**

***9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ՝ Անդրանիկ Կարապետյանի՝ գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի փետրվարի 16-ին N1990 թվագրմամբ)՝ Հայաստանի **Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին՝ որպես նվիրատվություն, հատկացնել 400 000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2026 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

*Քնարիկ Հարությունյանի առաջարկով այս հարցը նույնպես հեղինակի կողմից հանվեց օրակարգից՝ նախագծերի մեջ փարբերություն չդնելու պատճառաբանությամբ:*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

### *10. ԹՎՈՎ ՎԵՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով որոշման հավելվածում նշված դիմումատուների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն թվով վեց քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների գույքահարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի վճարումից՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Քնարիկ Հարությունյանը ներկայացրեց իր առարկությունները՝ կապված նախագծի հավելվածում տեղ գտած մի քանի մեքենաների գույքահարկի տույժերի վճարուման նկատմամբ արտոնություններ սահմանելու վերաբերյալ: Առաջարկեց սահմանել որոշակի չափորոշիչներ՝ արտոնություններ ստանալու նպատակով դիմող քաղաքացիների համար: Ք.Հարությունյանի առաջարկով հեղինակի կողմից հարցը հանվեց օրակարգից՝ հաջորդ նիստին ավելի հիմնավորված ներկայացնելու նպատակով:*

**LՍԵՑԻՆ**

***11. ՍԻՍԱԿ ԱՐԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 2/2 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Կարինե Մկրտչի Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին, իր որդուն՝ Սիսակ Արամի Վարդանյանին պատկանող քաղաք Գյումրի, Թբիլիսյան խճուղի N 2/2 հասցեի շինության (այսուհետև շինություն) 2008 թվականից մինչև 2020 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի գույքահարկի և 2021 թվականից մինչև 2026 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի անշարժ գույքի հարկի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Շինությունը 2005 թվականի նոյեմբերի 14-ից սեփականության իրավունքով պատկանել է Սիսակ Արամի Վարդանյանին, իսկ շինության փաստացի զբաղեցրած հողամասը Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2117 որոշմամբ տրամադրվել էր Սիսակ Արամի Վարդանյանին վարձակալության իրավունքով հինգ տարի ժամկետով (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2117 որոշումը): Սիսակ Արամի Վարդանյանը մահացել է 2007 թվականին, իսկ շինությունը քանդվել է 2006 թվականին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանման ղեկավար Պապոյանի կողմից 2006 թվականի օգոստոսի 04-ին տրված N Կգ-1567 տեղեկանքը, Գյումրու քաղաքապետի կողմից 2005 թվականի նոյեմբերի 16-ին տրված N1/1-009/6258 գրությունը շինության հասցեավորման վերաբերյալ, Գյումրու քաղաքապետարանի ծրագրերի տեղեկատվության և վերլուծությունների բաժնի կողմից 2006 թվականի հոկտեմբերի 11-ին տրված գրությունը՝ գույքահարկի գծով հարկային պարտավորություն չունենալու վերաբերյալ): Շինության համար 2008 թվականից մինչև 2020 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար հաշվարկված է գույքահարկի, իսկ 2021 թվականից մինչև 2026 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար՝ անշարժ գույքի հարկի գումար:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Կարինե Մկրտչի Վարդանյանի դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի փետրվարի 09-ին N1632 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Սահմանել արտոնություն Սիսակ Արամի Վարդանյանին պատկանող շինության 2008 թվականից մինչև 2020 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի գույքահարկի ընդամենը 690.215 (վեց հարյուր իննսուն հազար երկու հարյուր տասնհինգ) Հայաստանի

Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 464.593 (չորս հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 225.622 (երկու հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ և 2021 թվականից մինչև 2026 թվականը ներառյալ ընկած ժամանակաշրջանի անշարժ գույքի հարկի ընդամենը 279.557 (երկու հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր հիսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը կազմում է 239.190 (երկու հարյուր երեսունինը հազար հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 40.367 (քառասուն հազար երեք հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Մկրտչի Վարդանյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 43-Ա)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***12. ՎԱՀԱՆ ՀԵՆՐԻԿԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ***

***ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Վահան Հենրիկի Համբարձումյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ՄԵՐՍԵԴԵՍ-ԲԵՆՑ Ե 320» (MERCEDES-BENZ E 320) մակնիշի, 36 OC 594 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2020 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2026 թվականի մարտ ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Վահան Հենրիկի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում գտնվել է Արցախում և ներկայումս գտնվելու վայրը անհայտ է (հիմք՝ Վահան Հենրիկի Համբարձումյանի կողմից լիազորված անձ Մկրտիչ Հենիկի Համբարձումյանի կողմից 2026 թվականի փետրվարի 24-ին տրված հայտարարությունը՝ տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի անհայտ լինելու վերաբերյալ, լիազորագիր՝ տրված երկու հազար քսանվեց թվականի փետրվարի տասներեքին «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար Ռիտա Սամվելի Նարոյանի կողմից, գրանցված գրանցամատյանում թիվ 781), ուստի այն ենթակա է հաշվառումից հանման: Վահան Հենրիկի Համբարձումյանը վճարել է մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության գումարը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Վահան Հենրիկի Համբարձումյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի տնակ 117/092 հասցեում, անձնագիր N AX0348655, տրված՝ 2024 թվականի հուլիսի 09-ին, ոստիկանության 064-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ՝ 1203980272) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2026թվականի փետրվարի 10-ին N1729 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Վահան Հենրիկի Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2020 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2026 թվականի մարտ ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 508.146 (հինգ հարյուր ութ հազար հարյուր քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2020 թվականի հոկտեմբեր ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 17.593 (տասնյոթ հազար հինգ հարյուր իննսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 20.467 (քսան հազար չորս հարյուր վաթսունյոթ)ՀՀ դրամ, 2021 թվականի հունվար ամսից մինչև 2026 թվականի մարտ ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար մայր գումարը կազմում է 370.651 (երեք հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 99.435 (իննսունինը հազար չորս հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը մայր գումարը կազմում է 388.244 (երեք հարյուր ութսունութ հազար երկու հարյուր քառասունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ տույժը՝ 119.902 (մեկ հարյուր տասնինը հազար ինը հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահան Հենրիկի Համբարձումյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -28 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
Ս. ՄԵԼԻՔՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 44-Ա)*

---

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***13. ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Արմինե Գրիգորի Գրիգորյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինողին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ԱԿՈՒՌԱ ԱՅԷԼԷՔՍ 2.4» (ACURA ILX 2.4) մակնիշի, 37 JS 133 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2025 թվականի օգոստոս ամսից մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով:

Արմինե Գրիգորի Գրիգորյանի ամուսինը՝ Դավիթ Հրաչյայի Սարգսյանը մասնակցել է քառասունչորսօրյա պատերազմին և 2020 թվականի հոկտեմբերի 10-ին զոհվել է մարտական գործողությունների ժամանակ (հիմք՝ Դավիթ Հրաչյայի Սարգսյանի թիվ ԲԱ492367 մահվան մասին պետական վկայականը, N 36/6833 տեղեկանքը՝ օրենքով սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու մասին):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արմինե Գրիգորի Գրիգորյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Ղանդիլյան փողոց տուն 51Ա/5 հասցեում, նույնականացման քարտ 013259692, տրված՝ 2022 մայիսի 24-ին, ոստիկանության 064-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ՝ 6408970648) դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2026 թվականի փետրվարի 16-ին N1941 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

